Ամբարշտությունը և Փրկչի զորությունը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Հիշեք ամբարշտության օրինակներ և ասեք, թե դրանք ինչպես են ազդում մեզ վրա:

- Եթե մտածեիք որևէ բանի մասին, որը կներկայացներ աշխարհի ամբարշտությունը, ի՞նչը կլիներ դա: Ինչո՞ւ:

- Եթեհիշեիքորևէ ակնածալից խորհրդանիշ կամ տիտղոս, որը կներկայացներ Փրկչին և այն, թե Նա ինչպես կարող է մեզ օգնել հաղթահարել այդ ամբարշտությունը, ո՞րը կլիներ դա: Ինչո՞ւ:

Ձեր օրագրի էջը կիսեք երկու մասի: Կարդացեք Հայտնություն 17.3-7 և 14 հատվածները՝ պատկերացնելով այն խորհրդանիշները, որոնք Հովհաննեսը օգտագործել է այս հատվածներում: Էջի մի մասում գրեք ամբարշտությունը նկարագրող հիմնական բառերն ու արտահայտությունները: Մյուս կողմում գրեք Հիսուս Քրիստոսին և արդարներին ներկայացնող խորհրդանիշները: Հետևյալ հուշումները կարող են օգտակար լինել.

Պոռնկություն (հայտնություն 17.4). անբարոյական սեռական գործողություններ: Դա կարող է նաև «ուրացության խորհրդանիշ» լինել (Սուրբ գրքերի ուղեցույց, «Պոռնկություն», scriptures.ChurchofJesusChrist.org)

Բաբելոն (Հայտնություն 17.5). Ամբարիշտ քաղաքի անունը, որը օգտագործվում է որպես ամբարշտության և նյութապաշտության խորհրդանիշ

Պոռնիկ (Հայտնություն 17.5). նա, ով անմաբորյական սեռական գործողություններ է կատարում դրամի կամ արևտրի դիմաց:

Հիացմունք (Հայտնություն 17.6). Զարմանք (տես հատված 6, ծանոթագրությունը)

- Ի՞նչ եք սովորել ձեր ընթերցած խորհրդանիշներից

- Հիսուս Քրիստոսի՝ հատված 14-ում ներկայացված տիտղոսները ի՞նչ են ձեզ օգնում հասկանալ Նրա մասին:

- Ի՞նչ գիտեք այն մասին, թե Գառը կամ Հիսուս Քրիստոսը ինչպես է հաղթահարել ամբարշտությունը: (Տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Աստծո գառը», scriptures.ChurchofJesusChrist.org.) Ի՞նչ է սանշանակում ձեզ համար:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 2—Study Guide*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.